3. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



Վ. ՍԱՐԳՍՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 հոկտեմբերի 2025 թվականի N 1128-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՅՈՒՂ
ՍԱՐԴԱՐԱՊԱՏ, 3-ՐԴ ՓՈՂՈՑ, 23 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԵՆՔ-
ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ
ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով, Հայաստանի Հանրապետության 2008թ. հունիսի 10-ի «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» օրենքով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով, 50-րդ և 51-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի ապրիլի 15-ի <<Շինությունների նպատակային նշանակության դասակարգման ցանկը սահմանելու մասին>> N600-Ն որոշման 1-ին հավելվածի 1-ին, 2-րդ, 4-րդ կետով, հաշվի առնելով, որ Հայաստանի Հանրապետության Արմավիր մարզի Արմավիր համայնքի գյուղ Սարդարապատ, 3-րդ փողոց, 23 հողամասում գտնվող կառույցները իրականացվել են մինչև 2001 թվականի մայիսի 15-ը և դրանց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները ու օրենքով պահպանվող շահերը, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չեն առաջանում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք և չեն գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օտարման գոտիներում և հողամասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1,2,3 ենթակետերով սահմանված պահանջներին, հիմք ընդունելով Արմավիր համայնքի ավագանու 2024թ.-ի նոյեմբերի 29-ի թիվ 131-Ն որոշումը, ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրի 16.02.2011թ. և Գայանե Ալբերտի Հարությունյանի 06.10.2025 թվականի թիվ 5066 դիմումը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վերականգնել Գայանե Ալբերտի Հարությունյանին (ծնվ. 28.04.1969թ.), Աղասի Գրիգորի Մնացականյանին (ծնվ. 17.05.1995թ.) և Ռուզաննա Գրիգորի Ասճատուրյանին (ծնվ. 11.12.

989թ.) պատկանող իրավունքները Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի գյուղ Սարգարապատ, 04-059-0050-0003 կադաստրային ծածկագրում գտնվող գտնվող 0.1287 հա օրինական հողամասի վրա 1965թ. և 1980թ. կառուցված 289,2 քմ մակերեսով բնակելի տան, 1980թ. կառուցված 7,3 քմ մակերեսով խորդանոցի, 1980թ. կառուցված 12,4 քմ մակերեսով թոնրատան, իսկ 2007թ. կառուցված 14,8 քմ մակերեսով ծածկոցը, 2007թ. կառուցված 17,9 քմ մակերեսով անասնաշենքը, 2021թ. կառուցված 1,8 քմ մակերեսով զուգարանը և 2018թ. կառուցված 6,86 քմ մակերեսով պարիսպը համարել ինքնակամ:

2. Ընդունել ի գիտություն , որ

1) կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը:

2) շինությունը կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

3. Գայանե Ալբերտի Հարությունյանին, Աղասի Գրիգորի Մնացականյանին և Ռուզաննա Գրիգորի Ասճատուրյանին պատկանող 04-059-0050-0003 կադաստրային ծածկագրից գույքին տալ ճշտված հասցե՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք , գյուղ Սարգարապատ, 3-րդ փողոց, 23 բնակելի տուն:

4. Սույն որոշմամբ գույքային միավորին տրամադրած հասցեն ենթակա է պետական գրանցման:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ավագանու որոշմամբ սահմանված հասցեի տրամադրման վճարը համայնքի բյուջե վճարելուց հետո:

6. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ղեկավարին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

7. Սույն որոշումը Հայաստանի Հանրապետության Օրենսդրությամբ սահմանված կարգով ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



Գ. ՍԱՐԳՍՅԱՆ

2025թ. հոկտեմբերի 14
ք. Արմավիր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 Հոկտեմբերի 2025 թվականի N 1129-Ա

ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետով, ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ավագանու 2018 թվականի օգոստոսի 31-ի «Արմավիր համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդի տեղաբաշխման (տեղադրման) կարգ ու պայմանները հաստատելու մասին» թիվ 57-Ն որոշմամբ, Արմավիր համայնքի ավագանու 2024 թվականի նոյեմբերի 29-ի «Արմավիր համայնքում տեղական տուրքերի և վճարների 2025 թվականի դրույքաչափերը սահմանելու մասին» թիվ 131-Ն որոշմամբ և հիմք ընդունելով Ա/Ձ Արմեն Կարապետյանի դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

- Բավարարել Ա/Ձ Արմեն Կարապետյանի դիմումը և թույլատրել քաղաք Արմավիր, Հանրապետության փ., 5 հասցեում գտնվող տարածքում արտաքին գովազդ տեղադրելը:
- Հանձնարարել Արմավիրի համայնքապետարանի աշխատակազմի բյուջետային եկամուտների հաշվառման, հավաքագրման և տրանսպորտի վերահսկողության բաժնին Ա/Ձ Արմեն Կարապետյանին տալու համապատասխան թույլտվություն:
- Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2025թ. հոկտեմբերի 14
ք. Արմավիր

Վ. ՍԱՐԳՍՅԱՆ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 հոկտեմբերի 2025 թվականի N 1130-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՄՅԱՍՆԻԿՅԱՆ ԳՅՈՒՂԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐ ՎՐԵԺ ՄԻՆԱՍՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և 31-րդ հոդվածի 9-րդ մասով, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 158-րդ հոդվածով, 159-րդ հոդվածի 1-ին մասով, 163-րդ հոդվածով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Մյասնիկյան գյուղի վարչական ղեկավար Վրեժ Մինասյանի 2025 թվականի հոկտեմբերի 15-ի թիվ 5248 դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

- Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Մյասնիկյան գյուղի վարչական ղեկավար Վրեժ Մինասյանին տրամադրել 2025 թվականի ամենամյա արձակուրդի 10 աշխատանքային օրերը՝ 2025 թվականի հոկտեմբերի 20-ից (01.08.2024թ. - 01.08.2025թ. ժամանակահատվածի համար)։
- Վրեժ Մինասյանին՝ աշխատանքի ներկայանալ 2025 թվականի նոյեմբերի 3-ին։
- Նշված ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Մյասնիկյան գյուղի վարչական ղեկավար Վրեժ Մինասյանի պարտականությունները վերապահել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Հացիկ գյուղի վարչական ղեկավար Արթուր Եղիազարյանին։
- Արմավիրի համայնքապետարանի աշխատակազմի Ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ ի գիտություն։
- Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից։

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վ. ՍԱՐԳՍՅԱՆ

2025թ. հոկտեմբերի 15
ք. Արմավիր





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 Հոկտեմբերի 2025 թվականի N 1131-Ա

ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետով, ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ավագանու 2018 թվականի օգոստոսի 31-ի «Արմավիր համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդի տեղաբաշխման (տեղադրման) կարգ ու պայմանները հաստատելու մասին» թիվ 57-Ն որոշմամբ, Արմավիր համայնքի ավագանու 2024 թվականի նոյեմբերի 29-ի «Արմավիր համայնքում տեղական տուրքերի և վճարների 2025 թվականի դրույքաչափերը սահմանելու մասին» թիվ 131-Ն որոշմամբ և հիմք ընդունելով Ա/Ձ Կատյա Տաշյանի դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

- Բավարարել Ա/Ձ Կատյա Տաշյանի դիմումը և թույլատրել քաղաք Արմավիր, Երևանյան փ., 17 հասցեում գտնվող տարածքում արտաքին գովազդ տեղադրելը:
- Հանձնարարել Արմավիրի համայնքապետարանի աշխատակազմի բյուջետային եկամուտների հաշվառման, հավաքագրման և տրանսպորտի վերահսկողության բաժնին Ա/Ձ Կատյա Տաշյանին տալու համապատասխան թույլտվություն:
- Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2025թ. հոկտեմբերի 15
ք. Արմավիր



Վ. ՍԱՐԳՍՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 հոկտեմբերի 2025 թվականի N 1132-Ա

ՀԱՅԿԱԶ ԶԱՎԵՆԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴԻԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387 որոշմամբ հաստատված կարգի 29-րդ և 51-րդ կետերով, հիմք ընդունելով Արմավիր համայնքի ավագանու 2024թ. նոյեմբերի 29-ի թիվ 131-Ն որոշումը, Հայկազ Զավենի Հովհաննիսյանի 14.10.2025թ. թիվ 5236 դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Հայկազ Զավենի Հովհաննիսյանին (ծնվ. 05/07/1955թ.) սեփականության իրավունքով պատկանող Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Մյասնիկյան գյուղում գտնվող գույքին (սեփականության վկայական թիվ 0126672) տալ ճշտված հասցե՝ Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզի Արմավիր համայնք, գյուղ Մյասնիկյան, Մ. Մելքոնյան փողոց, 44 բնակելի տուն:
2. Սույն որոշմամբ գույքային միավորին տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ավագանու որոշմամբ սահմանված հասցեի տրամադրման վճարը համայնքի բյուջե վճարելուց հետո:
4. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ղեկավարին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վ. ՍԱՐԳՍՅԱՆ

2025թ. հոկտեմբերի 16
ք. Արմավիր





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 հոկտեմբերի 2025 թվականի N 1133-Ա

ՔԱՂԱՔԱՑԻ ԱՐԱՄԱՅԻՍ ՍԵՐՅՈԺԱՅԻ ԱՎԵՏԻՍՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԻՆ ԱՎԵԼ ՀՈՂԱՄԱՍ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1, 2, 3 ենթակետերով, հիմք ընդունելով Արմավիր համայնքի ավագանու 2024թ. նոյեմբերի 29-ի թիվ 131-Ն որոշումը, ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիր 18.09.2025թ. և Արամայիս Ավետիսյանի 25.09.2025թ. թիվ 4871 դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

- Արամայիս Սերյոժայի Ավետիսյանին (ծնվ. 07.12.1980թ.) պատկանող Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Արմավիր քաղաքում գտնվող 04-001-0471-0025 կադաստրային ծածկագրով 600,0 քմ մակերեսով հողամասին կից ավել զբաղեցրած 36,0 քմ մակերեսով հողամասը անհատույց հատկացնել նրան՝ սեփականության իրավունքով:
- Սույն որոշմամբ սահմանված իրավունքները ենթակա են պետական գրանցման:
- Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Արմավիր քաղաքի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքում անհրաժեշտ փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստման համար սահմանված տեղական վճարը համայնքի բյուջե վճարելուց հետո:
- Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Արմավիր համայնքի Արմավիր քաղաքի ղեկավարին կամ դատական կարգով՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վ. ՄԱՐԳՍՅԱՆ

2025թ. հոկտեմբերի 16
ք. Արմավիր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 Հոկտեմբերի 2025 թվականի N 1134-Ա

ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետով, ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ավագանու 2018 թվականի օգոստոսի 31-ի «Արմավիր համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդի տեղաբաշխման (տեղադրման) կարգ ու պայմանները հաստատելու մասին» թիվ 57-Ն որոշմամբ, Արմավիր համայնքի ավագանու 2024 թվականի նոյեմբերի 29-ի «Արմավիր համայնքում տեղական տուրքերի և վճարների 2025 թվականի դրույքաչափերը սահմանելու մասին» թիվ 131-Ն որոշմամբ և հիմք ընդունելով Ա/Ձ Ալլա Շահբազյանի դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

- Բավարարել Ա/Ձ Ալլա Շահբազյանի դիմումը և թույլատրել քաղաք Արմավիր, Երևանյան փ., 17 հասցեում գտնվող տարածքում արտաքին գովազդ տեղադրելը:
- Հանձնարարել Արմավիրի համայնքապետարանի աշխատակազմի բյուջետային եկամուտների հաշվառման, հավաքագրման և տրանսպորտի վերահսկողության բաժնին Ա/Ձ Ալլա Շահբազյանին տալու համապատասխան թույլտվություն:
- Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2025թ. հոկտեմբերի 16
ք. Արմավիր



Վ. ՄԱՐԳԱՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 հոկտեմբերի 2025 թվականի N 1135-Ա

ՂՈՒԿԱՍ ՄԽԻԹԱՐԻ ԱՎԵՏԻՍՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թ. հեկտեմբերի 29-ի թիվ 2387 որոշմամբ հաստատված կարգի 29-րդ և 51-րդ կետերով, հիմք ընդունելով Արմավիր համայնքի ավագանու 2024թ. նոյեմբերի 29-ի թիվ 131-Ն որոշումը, Ղուկաս Մխիթարի Ավետիսյանին 10.10.2025թ. թիվ 5179 դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Ղուկաս Մխիթարի Ավետիսյանին (ծնվ. 07/12/1960թ.) սեփականության իրավունքով պատկանող (կադաստրային ծածկագիր՝ 04-043-0875-0029) Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Մայիսյան գյուղում գտնվող գույքին տալ ճշտված հասցե՝ Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզի Արմավիր համայնք, գյուղ Մայիսյան, Այգեգործազան 1-ին թաղամասի 9-րդ փողոց, 16 հողամաս:
2. Սույն որոշմամբ գույքային միավորին տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ավագանու որոշմամբ սահմանված հասցեի տրամադրման վճարը համայնքի բյուջե վճարելուց հետո:
4. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ղեկավարին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2025թ. հոկտեմբերի 16
ք. Արմավիր



Վ. ՍԱՐԳՍՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 հոկտեմբերի 2025 թվականի N 1136-Ա

«ԱՐԱՐՄ ԳՐՈՒՊ» ԲԲԸ-ԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387 որոշմամբ հաստատված կարգի 29-րդ և 51-րդ կետերով, հիմք ընդունելով Արմավիր համայնքի ավագանու 2024թ. նոյեմբերի 29-ի թիվ 131-Ն որոշումը, «ԱՐԱՐՄ ԳՐՈՒՊ» ԲԲԸ-ի տնօրեն Կարեն Արարատի Հարությունյանի 09.10.2025թ. թիվ 5143 դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. «ԱՐԱՐՄ ԳՐՈՒՊ» ԲԲԸ-ին սեփականության իրավունքով պատկանող Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Արմավիր քաղաքում գտնվող գույքին (վկայական թիվ՝ 04062025-04-0048) տալ ճշտված հասցե՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք, քաղաք Արմավիր, Սայաթ-Նովայի փողոց, 2/9 շինություն:
2. Սույն որոշմամբ գույքային միավորին տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ավագանու որոշմամբ սահմանված հասցեի տրամադրման վճարը համայնքի բյուջե վճարելուց հետո:
4. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ղեկավարին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Կ. ՍԱՐԳՍՅԱՆ

2025թ. հոկտեմբերի 16
ք. Արմավիր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2025 թվականի N 1137-Ա

ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՅԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ
ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի և նույն հոդվածի 2-րդ մասի պահանջներով և հիմք ընդունելով ներքոնշյալ աղյուսակում նշված հանգամանքի առկայությունը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

Ստորև բերված աղյուսակում նշված մասնակցին (պայմանագրի կողմին) ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Գնման ընթացա կարգի ծածկագիրը	Պայմանագրի					Պայմանագրի կողմի /մատակարար, կատարող, կապալառու/			Պատվի րատուի անվանու մը	Պայմանա գիրը լուծելու վերաբերյալ ծանուցումը հրապարա կելու ամսաթիվը	Իրավական հիմքը	Այլ անհրաժեշտ տեղեկություն
	Ծածկա գիրը	Չափա բաժնի համարը	Գնման առարկայի անվանումը	Չափա բաժնի գնման գինը /ՀՀ դրամ/	Չափա բաժնի գինը /ՀՀ դրամ/	Անվա նումը	ՀՎՀՀ	Գործունեու յան հասցեն				
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13
ԱՔ- ԷԱՃԱՊՁԲ- 24/4	ԱՔ- ԷԱՃԱՊՁԲ- 24/4-2	9-րդ	Պահարաններ զարգացնող միջավայրի համար /աշխատան քային կենտրոն/	924000	924000	«ՇԵՆ- ՂԵԿՈՐ» ՍՊԸ	01310118	ք. Երևան, Հաղթանակի 6փ	Արմավիրի համայնքապետարան	26.09.25թ.	Պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետ /էականություն խախտվել է մատակարարման ժամկետը/	Սահմանված ժամկետում չի վճարել պայմանագրի և որակավորման ապահովման գումարը

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Կ. ՍԱՐԳՍՅԱՆ

2025թ. հոկտեմբերի 16
ք. Արմավիր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2025 թվականի N 1138-Ա

ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՅԻՆ ՄԱՍՆԱԿՅԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի և նույն հոդվածի 2-րդ մասի պահանջներով և հիմք ընդունելով ներքոնշյալ աղյուսակում նշված հանգամանքի առկայությունը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

Ստորև բերված աղյուսակում նշված մասնակցին (պայմանագրի կողմին) ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Գնման ընթացա կարգի ծածկագիրը	Պայմանագրի					Պայմանագրի կողմի /մատակարար, կատարող, կապալառու/			Պատվի րատուի անվանու մը	Պայմանա գիրը լուծելու վերաբերյալ ձանուցումը հրապարա կելու ամսաթիվը	Իրավական հիմքը	Այլ անհրաժեշտ տեղեկատվություն
	Ծածկա գիրը	Չափա բաժնի համարը	Գնման առարկայի անվանումը	Չափա բաժնի գնման գինը /ՀՀ դրամ/	Չափա բաժնի գինը /ՀՀ դրամ/	Անվա նումը	ՀՎՀՀ	Գործունեութ յան հասցեն				
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13
ԱԲ- ԷԱՃԱՊՁԲ- 24/5	ԱԲ- ԷԱՃԱՊՁԲ- 24/5-1	1-ին	Լվացարան /երկրենանի/	330000	330000	«ՇԵՆ- ԴԵԿՈՐ» ՍՊԸ	0131018	ք. Երևան, Հաղթանակի 6փ	Արմավիրի համայնքապետարան	26.09.25թ.	Պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետ /էականո րեն խախտվել է մատակա րարման ժամկետը/	Սահմանված ժամկետում չի վճարել պայմանա գրի և որակավոր ման ապահով ման գումարը

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՍԱՐԳՍՅԱՆ

2025թ. հոկտեմբերի 16
ք. Արմավիր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

17 հոկտեմբերի 2025 թվականի N 1139-Ա

**ԱՍՏԴԻԿ ՎԱՐԱՆՑՈՎԻ ՇԻՐԻՆՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ «ԱՅԳԵՎԱՆԻ
ԲԺՇԿԱԿԱՆ ԱՄԲՈՒԼԱՏՈՐԻԱ» ՀՈԱԿ-Ի ՏՆՕՐԵՆԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ
ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 1.5 կետով, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 94-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Երևան քաղաք Արաբկիր վարչական շրջան Ա. Խաչատրյան փողոց 30 շենք 24 բնակարանի բնակիչ Աստղիկ Վարանցովի Շիրինյանի 2025 թվականի հոկտեմբերի 17-ի թիվ 5317 դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

- 2025 թվականի հոկտեմբերի 17-ից Աստղիկ Վարանցովի Շիրինյանին նշանակել Հայաստանի Հանրապետության «Այգեվանի բժշկական ամբուլատորիա» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար՝ մինչև Հայաստանի Հանրապետության «Այգեվանի բժշկական ամբուլատորիա» համայնքային ոչ առևտրային կազմակերպության լուծարվելը:
- Աստղիկ Վարանցովի Շիրինյանի հետ կնքել ժամկետային աշխատանքային պայմանագիր:
- Հանձնաժողովին՝ օրենքով սահմանված կարգով կատարել հանձնում-ընդունում:
- Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ  Վ. ՍԱՐԳՍՅԱՆ

2025թ. հոկտեմբերի 17
ք. Արմավիր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

17 հոկտեմբերի 2025 թվականի N 1140-Ա

ԱՍՏԴԻԿ ՀՐԱՆՏԻ ԱԶԱՐՅԱՆԻՆ ԵՎ ԽԱԶԱՏՈՒՐ ԱՇՈՏԻ ՇԱՀՎԵՐԴՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՅԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387 որոշմամբ հաստատված կարգի 29-րդ և 51-րդ կետերով, հիմք ընդունելով Արմավիր համայնքի ավագանու 2024թ. նոյեմբերի 29-ի թիվ 131-Ն որոշումը, Աստղիկ Հրանտի Ազարյանի 01.10.2025թ. թիվ 4976 դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

- Աստղիկ Հրանտի Ազարյանին (ծնվ. 15/04/1957թ.) և Խաչատուր Աշոտի Շահվերդյանին (ծնվ. 02/08/1980թ.) սեփականության իրավունքով պատկանող Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Արմավիր քաղաքում գտնվող գույքին (սեփականության վկայական թիվ 16072025-04-0069) տալ ճշտված հասցե՝ Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզի Արմավիր համայնք, քաղաք Արմավիր, Սահմանապահների փողոց, 47 շենք, 7 տարածք:
- Սույն որոշմամբ գույքային միավորին տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:
- Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ավագանու որոշմամբ սահմանված հասցեի տրամադրման վճարը համայնքի բյուջե վճարելուց հետո:
- Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ղեկավարին կամ դատարան, կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2025թ. հոկտեմբերի 17
ք. Արմավիր

Վ. ՍԱՐԳՍՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

17 հոկտեմբերի 2025 թվականի N 1141-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԱՏԵՍՏԱՎՈՐՈՒՄ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասով, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման համակարգող նախարարի 2006 թվականի սեպտեմբերի 11-ի N 15-Ն հրամանով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ղեկավարի 2025 թվականի հոկտեմբերի 14-ի N 191 կարգադրությունը և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի 2025 թվականի հոկտեմբերի 14-ի N 179 հրամանը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

- Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիրի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայողների ատեստավորում անցկացնելու ժամանակացույցը՝ համաձայն հավելվածի:
- Արմավիրի համայնքապետարանի աշխատակազմին (Լիանա Հայրապետյան)՝ համայնքային ծառայողների ատեստավորման աշխատանքներն իրականացնել «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման համակարգող նախարարի 2006 թվականի սեպտեմբերի 11-ի «Համայնքային ծառայողի ատեստավորման կարգը սահմանելու մասին» N 15-Ն հրամանով սահմանված կարգի, հանձնաժողովի աշխատակարգի և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:
- Ատեստավորման անցկացման տեխնիկական սպասարկումն իրականացնելու համար լիազորված անձ նշանակել Արմավիրի համայնքապետարանի աշխատակազմի Քարտուղարության, անձնակազմի կառավարման, տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի գլխավոր մասնագետ Սաթենիկ Մարտիրոսյանին (ատեստավորման սկիզբ՝ 21.11.2025թ., ատեստավորման ավարտ՝ 09.12.2025թ.):
- Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Գ. ՄԱՐԳՍՅԱՆ

2025թ. հոկտեմբերի 17
ք. Արմավիր

ՑՈՒՑԱԿ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԱՏԵՍՏԱԿՈՒՄԱՆ

Հ/Հ	Անուն, հայրանուն, ազգանուն	Զբաղեցրած պաշտոնը, ծածկագիրը	Օրը, ամիսը, տարին, ժամը
1	Նուշիկ Աշոտի Դավթյան	աշխատակազմի Քարտուղարության, անձնակազմի կառավարման, տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի պետ /ծածկագիր 2.1-1/	05.12.2025թ. Ժամը 10:00
2	Արամ Եղիշի Տիգրանյան	աշխատակազմի Գույքահարկի հաշվառման, սպասարկման և հավաքագրման բաժնի պետ /ծածկագիր 2.1-5/	05.12.2025թ. Ժամը 10:00
3	Արայիկ Սերյոժայի Ստեփանյան	աշխատակազմի Բյուջետային եկամուտների հաշվառման, հավաքագրման և տրանսպորտի վերահսկողության բաժնի պետ /ծածկագիր 2.1-6/	05.12.2025թ. Ժամը 10:00
4	Սաթենիկ Գևորգի Մարտիրոսյան	աշխատակազմի Քարտուղարության, անձնակազմի կառավարման, տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի գլխավոր մասնագետ /ծածկագիր 2.3-2/	09.12.2025թ. Ժամը 10:00
5	Իրինա Սամվելի Գալստյան	աշխատակազմի Ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետ /ծածկագիր 2.3-3/	09.12.2025թ. Ժամը 10:00
6	Կարինե Ժորայի Պողոսյան	աշխատակազմի Ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետ /ծածկագիր 2.3-4/	09.12.2025թ. Ժամը 10:00
7	Արսեն Արամայիսի Բաղդասարյան	աշխատակազմի Բյուջետային եկամուտների հաշվառման, հավաքագրման և տրանսպորտի վերահսկողության բաժնի գլխավոր մասնագետ /ծածկագիր 2.3-10/	02.12.2025թ. Ժամը 10:00
8	Անահիտ Յուլակի Դավթյան	աշխատակազմի Կրթության, մշակույթի, սպորտի և երիտասարդության հարցերի բաժնի գլխավոր մասնագետ /ծածկագիր 2.3-11/	02.12.2025թ. Ժամը 10:00

	Մարինե Ռոբերտի Համբարյան	աշխատակազմի գլխավոր մասնագետ /ծածկագիր 2.3-12/	02.12.2025թ. Ժամը 10:00
10	Աննա Արշավիրի Համբարյան	աշխատակազմի առաջատար մասնագետ /ծածկագիր 3.1-13/	21.11.2025թ. Ժամը 10:00
11	Գոհար Ստյոպայի Կարապետյան	աշխատակազմի առաջատար մասնագետ /ծածկագիր 3.1-15/	21.11.2025թ. Ժամը 10:00
12	Եղսիկ Արմենի Եղիազարյան	աշխատակազմի առաջատար մասնագետ /ծածկագիր 3.1-16/	25.11.2025թ. Ժամը 10:00
13	Գագիկ Ռաֆիկի Թումանյան	աշխատակազմի առաջատար մասնագետ /ծածկագիր 3.1-17/	25.11.2025թ. Ժամը 10:00
14	Անդրանիկ Սիմոնի Աբրահամյան	աշխատակազմի առաջատար մասնագետ /ծածկագիր 3.1-20/	21.11.2025թ. Ժամը 10:00
15	Հմայակ Յուրիի Մինասյան	աշխատակազմի առաջատար մասնագետ /ծածկագիր 3.1-22/	25.11.2025թ. Ժամը 10:00
16	Ռոբերտ Հակոբի Աղաբեկյան	աշխատակազմի առաջատար մասնագետ /ծածկագիր 3.1-23/	25.11.2025թ. Ժամը 10:00
17	Կատրին Երվանդի Միրզախանյան	աշխատակազմի առաջատար մասնագետ /ծածկագիր 3.1-24/	21.11.2025թ. Ժամը 10:00
18	Սարինե Սարգսի Դուդակյան	աշխատակազմի առաջատար մասնագետ /ծածկագիր 3.1-25/	21.11.2025թ. Ժամը 10:00
19	Արմեն Եփրանոսի Կիրակոսյան	աշխատակազմի առաջատար մասնագետ /ծածկագիր 3.1-26/	25.11.2025թ. Ժամը 10:00
20	Պարզևուհի Վանուշի Մնացականյան	աշխատակազմի Ֆինանսատնտեսագիտական բաժնի առաջին կարգի մասնագետ /ծածկագիր 3.2-6/	28.11.2025թ. Ժամը 10:00
21	Գայանե Հովհաննեսի Հովսեփյան	աշխատակազմի Ֆինանսատնտեսագիտական բաժնի առաջին կարգի մասնագետ /ծածկագիր 3.2-7/	28.11.2025թ. Ժամը 10:00
22	Աստղիկ Ստեփանի Մանվելյան	աշխատակազմի առաջին կարգի մասնագետ /ծածկագիր 3.2-20/	28.11.2025թ. Ժամը 10:00
23	Վարդես Սամվելի Եղիազարյան	աշխատակազմի առաջին կարգի մասնագետ /ծածկագիր 3.2-21/	28.11.2025թ. Ժամը 10:00



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 հոկտեմբերի 2025 թվականի N 1142-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՅՈՒՂ
ՍԱՐԴԱՐԱՊԱՏ 21-ՐԴ ՓՈՂՈՑ ,15 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԵՆՔ-
ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՌԱՖԻԿ ԱՆԴՐԱՆԻԿԻ ՀԱԿՈԲՅԱՆԻ,ԱՐԵԳՆԱԶԱՆ
ՌԱՖԻԿԻ ՀԱԿՈԲՅԱՆԻ,ՎԱՐԴԱՆՈՒՇ ՎՈԼՈԴՅԱՅԻ ՀԱԿՈԲՅԱՆԻ,ԷԴԳԱՐ ՌԱՖԻԿԻ
ՀԱԿՈԲՅԱՆԻ,ԷՌՆԵՍ ՌԱՖԻԿԻ ՀԱԿՈԲՅԱՆԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ
ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության 2008թ. հունիսի 10-ի «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» օրենքով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով, 50-րդ և 51-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի ապրիլի 15-ի <<Շինությունների նպատակային նշանակության դասակարգման ցանկը սահմանելու մասին>> N600-Ն որոշման 1-ին հավելվածի 1-ին , 2-րդ, 4-րդ կետով, հաշվի առնելով ,որ Հայաստանի Հանրապետության Արմավիր մարզի Արմավիր համայնքի գյուղ Սարդարապատ ,21-րդ փողոց ,15 հողամասում գտնվող կառույցները իրականացվել են մինչև 2001 թվականի մայիսի 15-ը և դրանց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները ու օրենքով պահպանվող շահերը, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով , չեն առաջանում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք և չեն գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի , այդ թվում ' ինժեներատրանսպորտային օտարման գոտիներում և հողամասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1,2,3 ենթակետերով սահմանված պահանջներին , հիմք ընդունելով Արմավիր համայնքի ավագանու 2023թ.-ի դեկտեմբերի 21-ի թիվ 10 նիստի 136-Ն որոշումը, հիմք ընդունելով Արմավիր համայնքի ավագանու 2023թ. դեկտեմբերի 21-ի թիվ 10 նիստի 136-Ն որոշումը ,Ռաֆիկ Անդրանիկի Հակոբյանի 22.09.2025 թվականի թիվ 4806 դիմումը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Ռաֆիկ Անդրանիկի Հակոբյանին /ծնվ. 01.02.1949թ./, Արեգնազան Ռաֆիկի Հակոբյանին /ծնվ. 15.06.1983թ./, Վարդանուշ Վոլոդյայի Հակոբյանին /ծնվ. 06.03.1963թ./, Էդգար Ռաֆիկի Հակոբյանին /ծնվ. 04.07.1984թ./, Էռնեստ Ռաֆիկի Հակոբյանին /ծնվ. 14.04.1988թ./ պատկանող Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր

համայնքի Սարդարապատ գյուղում գտնվող 04-059-0034-0002 կադաստրային ծածկագրով 1300,0 քմ մակերեսով հողամասին կից ավել զբաղեցրած 196,0 քմ մակերեսով հողամասը անհատույց տրամադրել նրան՝ սեփականության իրավունքով,

2. Վերականգնել Ռաֆիկ Անդրանիկի Հակոբյանին, Արեգնազան Ռաֆիկի Հակոբյանին, Վարդանուշ Վոլոդյայի Հակոբյանին, Էդգար Ռաֆիկի Հակոբյանին, Էռնեստ Ռաֆիկի Հակոբյանին պատկանող Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի գյուղ Սարդարապատ 04-059-0034-0002 կադաստրային ծածկագրով 0.1496 հա օրինական հողամասի վրա 1980թ. կառուցված 60,5 քմ մակերեսով բնակելի տան նկատմամբ, իսկ 2019թ. կառուցված 90,5 քմ մակերեսով բնակելի տունը համարել ինքնակամ:

3. Ընդունել ի գիտություն , որ

1) կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը:

2) շինությունը կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

4. Ռաֆիկ Անդրանիկի Հակոբյանին ,Արեգնազան Ռաֆիկի Հակոբյանին,Վարդանուշ Վոլոդյայի Հակոբյանին,Էդգար Ռաֆիկի Հակոբյանին,Էռնեստ Ռաֆիկի Հակոբյանին պատկանող Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Սարդարապատ գյուղում գտնվող գույքին տալ ճշտված հասցե՝ Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզի Արմավիր համայնք, գյուղ Սարդարապատ,21-րդ փողոց ,15 բնակելի տուն:

5. Սույն որոշմամբ գույքային միավորին տրամադրած հասցեն ենթակա է պետական գրանցման:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ավագանու որոշմամբ սահմանված հասցեի տրամադրման վճարը համայնքի բյուջե վճարելուց հետո:

7. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ղեկավարին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

8. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ղեկավարի 2024 թվականի նոյեմբերի 14-ի թիվ 1405-Ա որոշումը:

9. Սույն որոշումը Հայաստանի Հանրապետության Օրենսդրությամբ սահմանված կարգով ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



Վ. ՍԱՐԳՍՅԱՆ

2025թ. հոկտեմբերի 20
ք. Արմավիր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 հոկտեմբերի 2025 թվականի N 1143-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՅՈՒՂ
ԱՐԱՔՍ, Գ. ՎԱՐԴԱՆՅԱՆ ՓՈՂՈՑ, 52 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԵՆՔ-
ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՄԻՍԱԿ ԱՆԴՐԱՆԻԿԻ ԹՈՎՄԱՍՅԱՆԻ
ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով, Հայաստանի Հանրապետության 2008թ. հունիսի 10-ի «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական քնակելի տների կարգավիճակի մասին» օրենքով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով, 50-րդ և 51-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի ապրիլի 15-ի <<Շինությունների նպատակային նշանակության դասակարգման ցանկը սահմանելու մասին>> N600-Ն որոշման 1-ին հավելվածի 1-ին, 2-րդ, 4-րդ կետով, հաշվի առնելով, որ Հայաստանի Հանրապետության Արմավիր մարզի Արմավիր համայնքի գյուղ Արաքս, Գ. Վարդանյան փողոց, 52 հողամասում գտնվող կառույցները իրականացվել են մինչև 2001 թվականի մայիսի 15-ը և դրանց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները ու օրենքով պահպանվող շահերը, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չեն առաջանում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք և չեն գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օտարման գոտիներում և հողամասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1,2,3 ենթակետերով սահմանված պահանջներին, հիմք ընդունելով Արմավիր համայնքի ավագանու 2024թ.-ի նոյեմբերի 29-ի թիվ 131-Ն որոշումը, ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրի 09.09.2025թ., ժառանգական գործ թիվ 643 և 644, և Միսակ Անդրանիկի Թովմասյանի 25.09.2025 թվականի թիվ 4870 դիմումը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վերականգնել Միսակ Անդրանիկի Թովմասյանին (ծնվ. 18.07.1975թ.) պատկանող իրավունքները Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի

գյուղ Արաքս, 04-016-0021-0046 կադաստրային ծածկագրում գտնվող գտնվող 0.0729 հա օրինական հողամասի վրա 1962թ. և 1984թ. կառուցված 83,6 քմ մակերեսով բնակելի տան, 1984թ. կառուցված 24,4 քմ մակերեսով խոհանոցի, 1984թ. կառուցված 26,0 քմ մակերեսով թոնրատան, 1984թ. կառուցված 22,8 քմ մակերեսով անասնաշենքի, 1984թ. կառուցված 1,03 քմ մակերեսով պարսպի և 1984թ. կառուցված 0,54 քմ մակերեսով պարսպի նկատմամբ, իսկ 2011թ. կառուցված 9,8 քմ մակերեսով ծածկոցը և 2017թ. կառուցված 52,1 քմ մակերեսով անասնաշենքը համարել ինքնակամ:

2. Ընդունելի գիտություն , որ

1) կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը:

2) շինությունը կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

3 . Միսակ Անդրանիկի Թովմասյանին պատկանող 04-016-0021-0046 կադաստրային ծածկագրից գույքին տալ ճշտված հասցե ' Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք , գյուղ Արաքս, Գ. Վարդանյան փողոց, 52 բնակելի տուն:

4 . Սույն որոշմամբ գույքային միավորին տրամադրած հասցեն ենթակա է պետական գրանցման:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ավագանու որոշմամբ սահմանված հասցեի տրամադրման վճարը համայնքի բյուջե վճարելուց հետո:

6. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ղեկավարին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

7. Սույն որոշումը Հայաստանի Հանրապետության Օրենսդրությամբ սահմանված կարգով ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



Վ. ՍԱՐԳՍՅԱՆ

2025թ. հոկտեմբերի 20
ք. Արմավիր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 հոկտեմբերի 2025 թվականի N 1144-Ա

ՔԱՆԱՔԱՐԱ ՍԱՐԻՔԵԿԻ ԱՎԵՏԻՍՅԱՆԻՆ ԵՎ ՌՈՒՔԻԿ ԱՐԹՈՒՐԻ ԱՎԵՏԻՍՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387 որոշմամբ հաստատված կարգի 29-րդ և 51-րդ կետերով, հիմք ընդունելով Արմավիր համայնքի ավագանու 2024թ. նոյեմբերի 29-ի թիվ 131-Ն որոշումը, Քանաքարա Ավետիսյանի 15.10.2025թ. թիվ 5270 դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

- Քանաքարա Սարիքեկի Ավետիսյանին (ծնվ. 16/02/1968թ.) և Ռուքիկ Արթուրի Ավետիսյանին (ծնվ. 27.06.1989թ.) սեփականության իրավունքով պատկանող (սեփականության վկայական թիվ 1565172) Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Մյասնիկյան գյուղում գտնվող գույքին տալ ճշտված հասցե՝ Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզի Արմավիր համայնք, գյուղ Մյասնիկյան, Հ. Շիրազի փողոց, 8 բնակելի տուն:
- Սույն որոշմամբ գույքային միավորին տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:
- Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ավագանու որոշմամբ սահմանված հասցեի տրամադրման վճարը համայնքի բյուջե վճարելուց հետո:
- Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ղեկավարին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Կ. ՍԱՐԳՍՅԱՆ

2025թ. հոկտեմբերի 20
ք. Արմավիր